ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2024 թվականի №---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի հոկտեմբերի 16-ի №Ե-4394-24 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակ փողոցի 1/9 հասցեում գտնվող 66.34 քմ մակերեսով հողատարածքը ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ին նվիրատվությամբ օտարման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը,

բ) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքի համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակ փողոցի 1/9 հասցեում գտնվող 66.34 քմ մակերեսով

հողատարածքը ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ին նվիրատվությամբ օտարման գործարքի կնքմանը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի պատճենը,
2) Գործարքի առարկա հանդիսացող գույքի օտարումից հետո դրա շուկայական արժեքին համապատասխանող գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2024թ.